ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 79
06 ապրիլ 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N 17-Ա որոշումը:

07/04/2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան
032268781

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 մարտի 2017 թվականի թիվ 17–Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-041-0219-0040 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապրես Աշոտի Ոսկանյանի դիմումը, «Մել և Միլ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագիծը՝ պարզեցինք, որ քարտեզագրման սխալի հետևանքով 06-041-0219-0040 ծածկագրում 0,3470 հա խոտհարքը, որը սեփականաշնորհման օրից մինչ այժմ տնօրինվում և օգտագործվում է Լեռնապատի բնակիչներ Ապրես, Աննա, Արմենուհի Ոսկանյանների և Անուշ Թովմասյանի կողմից դուրս է մնացել քարտեզագրումից և սխալմամբ Լեռնապատ համայնքին է փոխանցվել որպես գյուղատնտեսական այլ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված հողամասը գտնվում է վերը նշված ընտանիքին պատկանող երկու հողակտորների միջև և, որի համար ժամանակին, սկսած 1995թ-ից վճարում է հողի հարկը, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24-րդ կետով, ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 2 բաժնի 9-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Փոխադրել՝ 06-041-0219-0040 ծածկագրի տակ գտնվող, քարտեզագրման սխալի արդյունքում որպես գյուղատնտեսական այլ 0,3470 հա մակերեսով հողամասի հողատեսքը՝ 2-րդ կարգի խոտհարքի:
2. Ուղղել Լեռնապատ համայնքի կադաստրային քարտեզում առաջացած սխալը և 06-041-0219-0040 ծածկագրի տակ գտնվող 0.3470 հա մակերեսով 2-րդ կարգի խոտհարքի նկատմամբ, համաձայն հատակագծի ճանաչել Ապրես Աշոտի Ոսկանյանի, Անուշ Վազգենի Թովմասյանի, Աննա Ապրեսի Ոսկանյանի, Արմենուհի Ապրեսի Ոսկանյանի, սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

2017թ. մարտի 29
գ. Լեռնապատ